



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1304a
Գ. ՔԱՅԱՂՑԱՆ

ՀԱՄԱՏԱՐԱԾ
ԿՈՆԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ
ՃԱԿԱՏՈՒՄ

ՊԵՏՐՈՍ — 1930 — ՅԵՐԵՎԱՆ



LIBRARY
OF THE
MUSEUM OF
NATURAL HISTORY
AND
ZOOLOGY
OF THE
CITY OF
NEW YORK


Գ. ՔԱՅԱՂՑԱՆ

338.1K(09)

ՀԱՄԱՏԱՐԱԾ

ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

A 7
4267



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1980

Հրատ. № 1221

Գրառեպ. № 4013 (բ) Գատվ. № 252 Տիր. 5000

Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերևանում

Ինչպես ընդհանրապես Խորհրդային Միության մեջ, նույնպես և մեզ մոտ գյուղատնտեսության հսկայական վերելքը, մեքենայացման արագ թափը, կոլեզիզինաբարոյության անընդհատ ծավալումն ու խորացումը, գյուղ-աշխատավորության ափսոսելի վիճակի ընդլայնումը և համախմբումը կուսակցության ղիբեկախներին կանկրեստ կիրառման շուրջը, ինչպես նաև հացամթերման կամպանիայի հաջող ընթացքն ու ավարտումը լիովին մերկացրին աջ ուղղորտունիստների պանիկորական, կապիտուլյանտական տեսակետները և ավելի ցայտուն կերպով ապացուցեցին, վոր աջ-ուղղորտունիստներն արտահայտում են ին և արտահայտում են կուլակային տարրերի տրամադրություններն ուղղված դյուղի սոցիալիստական վերակառուցման դեմ:

Այնքան հեքցաթը դյուղատնտեսության դեգրադացիայի մասին ինքնին հերքվում ե. լեթե հաշվի առնենք թեկուղ միայն հեղաժյակի առաջին տարվա նվաճումները դյուղատնտեսության ասպարիզում:

1928-29 թվի սկզբին Անդրկովկասում կար ընդամենը 697 կոլխոզ 12,900 տնտեսությունով, իսկ նույն 28-29 թվի վերջին կոլխոզների թիվը համարյա 3 անգամ ավելացել է և հասել 1908 ի, ուր ընդգրկված է 38.000 տնտեսությունից ավել (3 անգամ աճել է):

1929 թվի գարնանացունի կամպանիայի շրջանորհիվ Անդրկովկասում ցանքատարածությունն ընդարձակվեց 55 հազար հեկտարով, վորն անչերեակայելի նվաճում է, իթե հաշվի առնենք այն ակտիվ դիմադրությունը, վոր ծավալեցին կուլակային, ադգայնական, նեպմանական ու հոգևորական տարրերը գարնանացունի դեմ աշերի և տրոցկիստական թափթփուկների հետ:

Պորհրդային Հայաստանում ցանքսերի տարածությունը 1929 թ. հասել է 362 հազար հեկտարի դաշնակցական ավանտյուրիստների իշխանության՝ 1919 թվի 75 հազար հեկտարի դիմաց: 1929 թ. ցանքատարածությունն ավել է 1913 թվի ցանքատարածությունից 19 հազար հեկտարով: Անասունների քանակը՝ վերածված խոշորի՝ հասել է 896 հազարի, վոր ավել է 1913 թվի նկատմամբ 41 հազարով, իսկ դաշնակների որով չեղածից՝ 577 հազարով:

Ծանրատարածության և անասունների թվի քանակական աճման հետ միասին անընդհատ ա-

ճուժ և նույն գյուղատնտեսության արտադրանքի արժեքը՝ հասնելով 1929 թվին 108 միլիոն 30 հազար ռուբլու:

Այդ քանակական նվաճումները կատարվում են գյուղատնտեսության մեքենայացման և կուլտիվացման անընդհատ ուժեղացող թափի պայմաններում: Արդեն 29 թվին ՀՍՍՀ ունենք 245 կոլխոզներ, Վոր Ընդգրկում են 8.200 տնտեսություն 25,500 հեկտար հողով: Այդպիսով կոլխոզների ցանքսերի տարածությունն աճել է $5\frac{1}{2}$ անգամ, Ընդհանուր արտադրանքը՝ 6 անգամ, խոշոր չեղջյուրավոր անասունների թիվը $3\frac{1}{2}$ անգամ: Սակայն կոլխոզների աճումը միայն քանակական չէ, այլ նաև վորակական. խոշորացել են կոլխոզները, բարձրացել է նրանց արտադրողականությունն ու ապրանքայնությունը և դարձել են նրանք ավելի ուժեղ: Այսպես որինակ 1928 թվին յուրաքանչյուր կոլխոզի ընկնում էր միջին հաշվով 72 հոգի, իսկ 1929 թվին՝ 113 հոգի: 1928 թվին յուրաքանչյուր կոլխոզի միջին ցանքը 26 հեկտար էր, իսկ 1929 թվին՝ 45 հեկտար: 1928 թվին ամեն մի կոլխոզ միջին թրվով ունեւ 12 յեզ և 12,7 կով, իսկ 1929 թվին՝ 18 յեզ 15,6 կով:

Սորհրդային տնտեսությունները զբավում են 55.700 հեկտար ընդհանուր տարածությու:

Ներմուծված է 926 հազար ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ: Մեր հողերում աշխատում է 250 արակտոր:

Անդրկովկասի մասշտաբով այդ նվաճումներն արտահայտվում են հետևյալ կերպ.

Ցանքատարածության աճումը.

1912-14 թ. ցանվ. եր	2.019	հազ.	հեկ.
1927	»	»	2.139,7
1928	»	»	2.160.1
1929	»	»	2.273

Անասունների քանակը 1929 թվին 28 թվին կատամար Անդրկովկասում ավելացել է 3,5 տոկոս:

Գյուղատնտեսության բնդհանուր արտադրանքի արժեքը 29 թվին 28 թվին կատամար աճել է 10,1 տոկոսով և կազմել 565 միլիոն 500 հազար ռուբլի:

1929 թվին կոլխոզների մեջ ներգրավված տնտեսությունների տոկոսը 1,4-ից հասավ 3,6-ի: Աճեց նաև կոլխոզների ցանքատարածությունը և 0,9 տոկոս տեսակարար կշռից բարձրացավ մինչև 2,6 տոկ. կամ ուրիշ խոտերով ամբողջ ցանքատարածության 2,6 տոկոսը կոլխոզների ցանքներն ելին:

Այս նվաճումներն արդյունք են կուս. 16-րդ կոնֆերենցիայի վերաշումների կիրառման և ա-

պացուցում են լենինյան կենտկոմի դիրեկտիվ-
ների միանգամայն ճիշտ լինելը:

Հակառակ աջ ոպպորտունիստների հառե-
տես նախագուշակութուններին և չնայած կու-
լակային տարրերի ծավալած ուժեղ դասակար-
գային պայքարին, վոր պրովակացիաներից հաս-
նում եր մինչև ակտիվ կոլխոզնիկներ յապա-
նություններն և ունեցվածքի հրդեհումները, դյու-
ղատնտեսության սոցիալիստական վերակառույց-
ման ճակատում ունեցանք աննախընթաց հաղ-
թանակներ: Այսօր արդեն հարաճուն կերպով
զարգանում ե գյուղի չքավորության մասսայա-
կան ձգտումը դեպի կոլխոզները և նրա հետ
միասին գնում ե կոլխոզ նաև գյուղի միջակա-
յին մասան:

«Կուսակցության 15-րդ համագումարը վոր-
պես կուսակցության գյուղում տանելիք աշխա-
տանքի հիմնական խնդիր առաջադրեց «գյուղա-
ցիական զբված տնտեսությունների աստիճանա-
կան անցումը խոշոր աբտադրության ոեխերի
վրա»: Վերջին Ձ տարվա ընթացքում կուսակցու-
թյունը ունեցավ խոշոր հաջողություններ 15-րդ
համագումարի այդ դիրեկտիվի կիրառման գոր-
ծում»: (Համ. Կենտկոմի նոյեմբերյան պլենու-մի
բանաձևից):

Այնուհետև թվելով կոլխոզչինաբարության

որ ավուր անող թափը, ինչպես նաև միջակության կոլխոզները զնայու փաստը՝ Համ. Կենտկոմի նոյեմբերյան պլենումը նշում ե.

«Կոլխոզարժման այդքան զգալի նվաճումները հանդիսանում են ուղղակի հետևանք կուսակցության գեներալների գծի հետևողական կիրառման, վոր ապահովեց արդյունաբերության զորեղ աճը, բանվոր դասակարգի դյուղացիական հիմնական մասսաների հետ զոգուժը, կոոպերատիվ հասարակայնության զարգացումը, մասսաների քաղաքական ակտիվության աճումը և պրոլետարական պետության նյութական ու կուլտուրական ռեսուրսների աճը»:

Այդ հսկայական նվաճումները պարզ կերպով ցույց են տալիս «գյուղատնտեսության արտադրական ուժերի վերելքի այն տեղի հնարավորությունները, վորոնք ստեղծվել են խորհրդային հասարակակարգի որով»:

ԵՆ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԹԱՓՈՎ

Սակայն չնայած կոլխոզների աճման և այդ հսկայական նվաճումներին՝ կոլխոզինարարության թափը Անդրկովկասում համարվում ե անբավարար: Անդրյերկումը տալով հրահանգ գարնանացանի մասին՝ շեշտում ե. «1930 թվականի գարնանացանի կամպանիան պետք ե Անդրկով-

կասի գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման թափի շեշտակի բեկման հիմքը դնի... Անդրկովկասի հասարակայնացված սեկտորի ցանճատարածութեան ընդարձակման և բերքատվութեան բարձրացման խնդիրը պետք է սերմանման կամպանիայի կենտրոնական տեղը գրավի»։ Այստեղից ել արդեն բոլորով եւ «առաջիկա 4-5 ամիսների ընթացքում կուսակցական և խորհրդային մարմինների աշխատանքի առանցքը պիտի լինի գարնանացանի կամպանիան»։

Յեւ այսոր արդեն դիրեկտիվ որգանների հրահանգն եւ գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հնգամյակն իրագործել չերկու տարվա ընթացքում և վոչնչացնել կուլակութունը վորպես դասակարգ։

Դրված խնդիրները մեծ են, տրված դիրեկտիվը շատ պարզ ու վորոշակի, վորի կիրառման համար անհրաժեշտ եւ ավելի ակտիվ աշխատանք ցուցաբերել պրոլետարական քաղաքի գյուղի հետ ունեցած նոր, արտադրական գոդման և գյուղի առաջատար լինելու ասպարեզներում։ Անհրաժեշտ եւ գյուղի և գյուղատնտեսութեան հետ առնչութիւն ունեցող բոլոր հիմնարկների, մարմինների և կազմակերպութիւնների աշխատանքի թափի (տեմպի) և բովանդակութեան մեջ առաջ բերել ուժեղ

բեկում ալիւի ճկուն, դյուրաշարժ ու ակտիվ լինելու նկատառումներով:

Առհասարակ սոցիալիստական շինարարութեան ասպարիզում վոչ միայն վերահանգնման, այլ նաև վերակառուցման շրջանում մեր յերկրի աշխատաւորութեան հրապարակված աննախընթաց աշխատանքը ցույց տվեց, վոր դիրեկտիվ որգաններէ հրահանգները գարնանացանի մասին ժամանակին, լրիւ և հավելումով կկատարենք: Միայն հարկավոր և խորհրդային ամբողջ հասարակացնութեան մոբիլիզացիա, պրոլետարիատի դյուղի վրա առաջատար դերի ուժեղացում և սոցմրցման ու ինքնաքննադատութեան ավելի ծավալում ու խորացում:

Ավելի պարզ ու վորոշակի ըմբռնելու համար ամեն մեկի անելիքը գարնանացանի կամ պանիային՝ ծանոթանանք Հ. ամ. Կենտկոմի համապատասխան դիրեկտիվին. «Առաջիկա գարնանացանի կամ պանիան բացառիկ նշանակութիւն ունի սոցիալիստական շինարարութեան համար: Մոտակա ամբողջ ժամանակում յուրաքանչյուր կոմսոնիստի, յուրաքանչյուր կուսկազմակերպութեան աշխատանքը պէտք է լինի ստուգել, նախ և առաջ, թե իրենք վոր չափով կկարողանան ցանքի կամ պանիայի կոնկրետ ծրագիրը հասցնել մինչև դյուղը և կուսնաեւութեաններին

ու կենսագործել ժողկոմխորհի 1929 թվի նույն-
 բերի 23-ի դեկրետով սահմանված առաջադրանք-
 ները: Գյուղական և կոլտնտեսությունների կազ-
 մակերպություններին ոգնության սլիտի ուղար-
 կվի յերկրային և շրջանային աշխատավորների
 հիմնական մասը: Ցանքի կամպանիայի իրագործ-
 ման ակտիվ աշակցություն ցույց տալու համար
 պետք է ներգրավել սլոյկտարական ամբողջ հա-
 սարակաշնությունը, առաջին հերթին, արհմիու-
 թյունները, կոմյերիտական կազմակերպություն-
 ները, բանվորական բրիգադներ, շեֆական ըն-
 կերությունները և բանվորների պատգամավորա-
 կան ժողովները: Յուրաքանչյուր գործարան սլի-
 տի մասնակցի բանվորական բրիգադաներ ու-
 ղարկելու գործին, առաջին հերթին աշակցու-
 թյուն ցույց տալու համար ցանքի կամպանիային
 և կոլտնտեսությունների շինարարությանը: Ա-
 ռաջիկա ցանքի կամպանիայի ընթացքում, կոլ-
 սնեստոսթյունների շարժումը՝ անկասկած, կրնո-
 գրկի յեվս միլիոնավոր գյուղացիական սնե-
 ստոսթյուններ: Հասարակական ինքնագործունե-
 յության և սոցիալիստական մրցության բոլոր
 ձևերը տնտեսական վերելքի հետագա ծավալման
 լծակները պետք է դառնան, վորպեսզի ապահով-
 վի ցանքերի տարածության ընդարձակումը, բեր-
 քատվության բարձրացումը, կոլտնտեսություն-

ների քանակական աճումը և վորակական լավացումը: Ցանքի կամպանիայում ձեռք բերել նույնպիսի հաջողություններ, ինչպես և հացամթերումների գործում — անավասիկ այդ և առաջիկա ամիսների կարելիորագույն խնդիրը:

Այստեղից արդեն պարզ է այն հարվածային և կենսական նշանակությունը, վոր ունի դարնանացանի կամպանիան: Ցանքսատարածության ընդարձակման և բերքատվության բարձրացման ու կոլխոզշինարարության ծավալման հետ միասին դրվում է նաև լեղած կոլխոզների խոշորացման և, առաջին անգամ Անդրկովկասում, շրջանների և գավառների համատարած կոլեկտիվացման խնդիրները:

Սակայն նախքան այդ խնդիրներին անցնելը ծանոթանանք Համ. Կենտկոմի դիրեկտիվում հիշխտակված Ժողկոմխորհի վորոշման հետ:

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Անհրաժեշտ համարել, վորպեսզի ցանքերի տարածությունն ընդարձակվի գարնանացանի ընթացքում վոչ պակաս, քան 11 տոկոսով: Կոլտնտեսությունների շարժումն առաջիկա գարնանը պետք է ընդգրկի ԽՍՀՄ-ում գարնան ամբողջ ցանքերի վոչ պակաս, քան մի յերրորդ մասը:

3. Հին և նոր կազմակերպվող կոլտնտեսու-
թյունների առջև դարնանացանի կամպանիայի
ընթացքում դնել հետևյալ խնդիրները. — ցանքե-
րի տաքածությունն ընդարձակել վոչ պակաս
քան 25 տոկոսով՝ խամ հողերը պիտանի դարձ-
նելու հաշվին. հատկապես արագ կերպով ըն-
դարձակել ցորենի ցանքերին հատկացվող հողե-
րի տաքածությունը. վճռական բեկում կատա-
րել համաձայնեցված (կոլլեկտիվացրած. ծան. թ.
Գ. Թ.) կենդանաբուծության համար կերի բա-
զա ստեղծելու գործում. կոլտնտեսությունների
բաժինը տեխնիկական կուլտուրաների բնագա-
վառում հասցնել 40 տոկոսի:

3. Կոլտնտեսությունների ամբողջ սերմա-
ցուն պետք է զտվի:

4. Կոլտնտեսության լուրաքանչյուր անգամ
պետք է պատասխանատու լինի իրեն հանձնա-
րարված աշխատանքի կատարման համար: Աշ-
խատանքի արտադրողականությունը բարձրաց-
նելու համար հարկավոր է մտցնել գործարքային
սխտեմ, պատրաստվող ապրանքների նորմավո-
րում և պարզեցացում, կիրառել սոցիալիստա-
կան մրցություն և տյն:

5. 1930 թվի դարնանը կազմակերպելիք պե-
տական 104 մեքենա-տրակտորային կայանները
1930 թ. դարնան և աշնան ամիսներին պետք

և կատարեն առնվազն 2 միլիոն հեկտար հերկ
և 1 միլիոն հեկտար ցանք:

6. Առաջիկա խնդիրներինց մեկը պետք է
լինի 1929-30 թվի բերքատուությունը բարձրաց-
նել առնվազն 8 տոկոսով:

7. Գարնանացանի կամպանիայի բերքավոր-
ման չափը սահմանել 814 միլիոն ուռքլի:

8. Գյուղատնտեսությանը 1930 թ. գարնա-
նը արտադրության միջոցներ արամադրելու հա-
մար կառավարության կողմից սահմանված տա-
րեկան պլանը պետք է կատարվի հետևյալ ձևով.
տրակտորներ արամադրվելու յեն 47,800—49,800
հատ, գյուղատնտեսական մեքենաներ՝ 200 միլ.
ուռքլու:

Այնուհետև Ժողկոմխորհի վորոշման մեջ
նշվում է այն հանգամանքը, վոր սյդ բոլոր
հարվածային ու բարդ խնդիրները չեն կարող
արագ ու լրիվ լուծում ստանալ, յեթե խորհրդ-
դային ամբողջ հասարակայնությունը, — բանվորա-
գյուղացիական լայն մասսաներն ու հասարակա-
կան կազմակերպությունները, ինչպես նաև իշ-
խանության որդանները մոբիլիզացիայի չչն-
թարկվեն գարնանացանի խնդիրների շուրջը:
Իսկ քանի վոր խորհրդային ամբողջ հասարակա-
յնության ամենաակտիվ մասնակցության խնդիրն
է դրվում, պարզ է, վոր առաջ է գալիս գյուղ-

դատնտեսական տարրական գիտելիքներն լայն մասսայականացման խնդիրը: Ժողկոմխորհը հրապարակում է այս տարի 6 միլիոն գյուղացիների կոլխոզների անդամ չքավոր-միջակ ակտիվի ագրո-անգրագիտությունը վերցնել: «Դրա համար յուրաքանչյուր ուսուցում և յուրաքանչյուր խոշոր կոլխոզին կից պիտի կազմակերպվեն ագրո-անգրագիտության վերացման կայաններ»:

ՔԱՂԼՈՒՍՑԱՆՑՆ ԱԳՐՈՒԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՑԱՆ

Դրան զուգընթաց անհրաժեշտ է առանց ուշացնելու վերակառուցել ամբողջ քաղուստանցը և առաջին հերթին խրճիթ-ընթերցարանը այն հաշվով, վոր այն դառնա.

1. Կոլխոզ շինարարության և համատարած կոլխոզացման գաղափարների պրոպագանդիստն ու կիրառման գործը կազմակերպողը:

2. Սոցիալիստական վերակառուցման լեն-թարկվող գյուղի կուլտուրական և քաղաքական կենտրոնը:

Այստեղից արդեն պարզ է, վոր խրճիթ-ըն-թերցարանի և առհասարակ քաղուստանցի հար-վածային բեկումն իր առջև պետք է դնի նպա-տակ:

1. Մասսայականացնել դարնանացանի խրն-

խիբները և կազմակերպել դրանց կիրառումը՝ մոբիլիզացիայի լենթարկելով խորհրդային հասարակայնութիւնը:

2. Գյուղաշխատավորութեան և կոլխոզների ակտիվ չքավոր-միջակ անդամների ազրո-անդրադիտութեան վերացման գործը կազմակերպել:

3. Սոցմրցման և ինքնաքննադատութեան լայն կիրառումով ապահովել կուսակցութեան և իշխանութեան գարնանացանի մասին տված դիրեկտիվների հավելումով կատարումը:

Վերոհիշյալից ինքնին հետևում է, վոր անդրադիտութեան վերացման դպրոցներն ել առաջիկա 4—5 ամիսների ընթացքում իրենց դասավանդութեան հիմնական նշութը պիտի դարձնեն գարնանացանն ու դրա հետ միասին ուսանողութեան ազրո-անդրադիտութեան վերացումը:

Ներկա բրոշյուրով նպատակ չունեմ և հնարավոր չե քաղլուսցանցի ամբողջ սենեիքների մասին խոսել, այդ աութիվ հատուկ բրոշյուր ե հրատարակվում:

Այժմ դառնանք գարնանացանի կոնկրետ առաջադրանքներին.


ԿՈՒՆՈՋՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Ներկա գարնանացանը պետք ե հանդիսանա Անդրկովկասի կոլխոզինարարութեան թափի բեկ-

ման հիմնադիրը: Այս գարնանացանը վճռական հարված է տալու կապիտալիստական տարրերին: Այս գարնանացանը վորոշում է գյուղատնտեսութ-
յան սոցիալիստական վերակառուցման հետա-
գա ընթացքի թափը: Հենց այդ պատճառով ել-
անհրաժեշտ է ելավելի մեծ ուշադրություն գար-
նանացանի կամայանիային: Այս գարնանացանին
առաջին տնգամ դրվում է Անդրկովկասում մի-
շարք գավառների և շրջանների համատարած
կոլխոզացման հարցը: Արդեն վոչ միայն նախա-
տեսված են համատարած կոլլեկտիվացման լեն-
թական վայրերը, այլ նաև սկսված է կոնկրետ
աշխատանք այդ շինարարության ճակատում:

Անդրկովկասի կոլխոզշինարարության մա-
սին դեռ 1929 թվի վերջերին կային կոնարոլ
թվեր, վորոնց համաձայն 1930 թ. հոկտեմբեր
1-ին Անդրկովկասում կոլխոզները պիտի ընդ-
գրկեյին 69 հազար գյուղացիական տնտեսու-
թյուն 192 հազար հեկտար ցանքատարածու-
թյամբ: Այդ նախագծի համաձայն կոլխոզացված
տնտեսությունները կկազմեյին ընդհանուր գյու-
ղացիական տնտեսությունների 7,4 տոկոսը. նա-
խորդ տարվա նկատմամբ այդ տոկոսն աճում է
2 անգամ, իսկ ըստ ցանքատարածության 3 ան-
գամ:

Սակայն կուսակցական և խորհրդային դի-



բեկտիվ մարմիններ ի հրահանգն եր այս գար-
նանացանին կոլլեկտիվացման թափի մեջ առաջ
բերել ուժեղ բեկումնրան ել ավելի արագ դարձ-
նելու նպատակով: Նման դիրքավորումից յեկե-
լով՝ այսօր արդեն վորոշված է առ 1-ն 1930
թվի հոկտեմբերը կոլխոզներում ունենալ ընդ-
գրկված 100 հազար գլուղացիական տնտեսու-
թյուն նախնական 69 հազարի փոխարեն: Ցանք-
սատարածությունն ընդարձակել այն հաշվով,
վոր կոլխոզների ցանքսերը կազմեն ընդհանուր
ցանքսերի 17 տոկոսը: Այդ հաշվով միայն գար-
նանացանին կոլխոզները ցանելու յեն 179 հազ.
հեկտար, վոր համարյա հավասար է 28-29 թվի
կոլխոզների ամբողջ տարվա ցանքսերին (գար-
նան ու տշնան միասին):

Ծրագրված կոլխոզչինարարությունն ըստ
հանրապետությունների բաշխվում է այս կերպ.
Հանրապետություն կոլխոզ տնտեսություն
Ադրբեջանի Ս. Խ. Հ. 1105 31640
Վրաստանի Ս. Խ. Հ. 1440 56000
Հայաստանի Ս. Խ. Հ. 350 12250

Սակայն պիտի շեշտել, վոր այդ նախնական
ալանն անպայման կը գերազանցվե և 100 հա-
զար տնտեսություն կոլխոզներում ընդգրկելու
փոխարեն կընդգրկվի շատ ու շատ ավելի: Ադրբ-
բեջանում վերջերս անցկացրված կոլխոզացման

յերկշաքաթորյակը ցույց է տվել, վոր արդեն հիմա անհրաժեշտ է վերանայել կոլխոզացման այս տարվա պլանն՝ ընդարձակելու նպատակով: Նման տվյալներ կան նաև մյուս հանրապետութիւններում:

Յերևանի գավառը, Բասարգեչարի, Ղզղդշի և Մուլադյոկչայի շրջանները, Դյուզքյանդի շրջանը, Ստեփանավանի շրջանը, Վրաստանում՝ Պախալանի թեմին, Կախեթիս, Ադրբեջանում՝ Բարդայի և Խիլայի դայրաները, Դիզակի և Մարգուշեվանի շրջանները և այլն պիտի լենթարկվեն համատարած կոլեկտիվացման այս տարի: Այդ մասին իրենց պահանջն են առաջադրում չքավոր ու միջակ գյուղացիները և կազմակերպչական աշխատանքներն արդեն սկսված են:

Բացի դրանից այս տարի հիմք է դրվում Անդրկովկասում 3 ուժեղ ագրոինդուստրիալ կոմբինատների, վորոնք լինելու լեն Սամտրեդի, Շամխորի և Մարդարաբադի հողերում:

Այդ կոմբինատներն հենվելով բարձր տեխնիկայի վրա՝ ունենալու յեն մի շարք ինդուստրիալ ձեռնարկութիւններ գյուղատնտեսական մթերքները վերամշակման յենթարկելու համար:

Ըստ նախնական կոնտրոլ թվերի կոլխոզների գարնան ցանքը ընդհանուր գարնանացա-

նի հետ համեմատած ըստ կուլտուրաների կու-
նենա հետևյալ պատկերը:

կուլտուրաներ	Աճողջ տարած.	կոլխոզներինը	Տոկոսներով
Հացահատիկներ	910 հ. հեկ.	78,6 հ. հեկ.	8,6
Բամբակ	183 >	52,6 >	28,9
Ցանված խոտ	38 >	10,0 >	31,5
Զայ	14,4 >	3,9 >	28

Սակայն պարզ է, վոր այս հարաբերությունն
անպայման խոշոր փոփոխության կյենթարկվի
կոլխոզների հողերի ընդարձակման ուղղությամբ,
քանի վոր կոլխոզչինարարության թափը չափա-
զանց արագանում է և կարիք է զգացվում նոր
կոնսրու թվերի:

Կոլխոզչինարարության թափի զարգացման
յեղած կոլխոզների խոշորացման խնդիրներին
այսուր դրվում է վորպես անհետաձգելի հարց
նաև կոլխոզների արտադրական մասնագիտաց-
ման-սպեցիալիզացիայի հարցը:

Կոլխոզների աճը, նրանց աշխատանքների
հետադա ավելի պլանավորումը, նրանց արտա-
դրանքի ապրանքայնության և արտադրողակա-
նության բարձրացումը և այլն պահանջում են
արտադրական սպեցիալիզացիա:

Այդ ուղղությամբ ևս աշխատանքներն ար-
դեն սկսված են և առաջիկ վորոշված է ունե-
նալ Ադրբեջանում:

1. Բամբակագործական	669	կոլխոզ (բոլոր կոլ- խոզների 60 տոկոսը)
2. Կենսափի	134	»
3. Ծխախոտի	10	»
4. Անասնապահական	31	»
5. Այլ	260	»

Վրաստանում առանձնապես աչքի չե ընկ-
նում չափի կոլխոզները, վորոնց թիվը 1928—29.
թվի 275-ից 30 թվին հասնելու չե 400-ի:

Հայաստանում, Արագածում կազմակերպվե-
լու չե վոչխարաբուծական խոշոր տնտեսու-
թյուն, իսկ 5-աթյակում նույնպես խոշոր տըն-
տեսություններ կազմակերպել Դարալազյազի,
Զանգեզուրի և Սևանի գավառներում:

Կոլխոզների խոշորացումը հնարավորություն
կտա անցկացնել արտադրական մասնագիտա-
ցումը: Շնորհիվ դրա հենց իր՝ կոլխոզի ասլրան-
քայնությունն ու արտադրողականությունը կը
բարձրանա ահագին չափերով: Մասնագիտա-
ցումը հնարավորություն կտա ավելի ռացիոնալ
կերպով ոգտագործել շրջապատի բնության ու
կլիմայական պայմանները, ավելի լավ բերք
ստանալ և մասնագիտանալով արտադրական մի
ճյուղի մեջ՝ ավելի ուժեղ կերպով բարձրացնել
տնտեսության արտադրողականությունը:

Դրա հետ միասին հնարավոր կլինի ավելի

հեշտ ու արագ լուծել տնտեսության ինտենսիվացման հարցը և մեքենայացման յենթարկել: Արտադրական սպեցիալիզացիան իմիջի ալլոց նաև պարարտ հոյ կտա վաղահաս (սկորոսպելկա) և բարձրորակ արտադրանքի համար: Թեկուզ հենց միայն անասունների վորակի բարձրացումը, ցեղի ազնվացումը, վաղահաս սերմերի պատրաստումը և այլն հիմնական խնդիրներ են գյուղատնտեսության և հատկապես կոլխոզի ապրանքայնության բարձրացման տեսակետից: Շատ ձուլ ածող հավեր կամ մսացու և շուտ խոշորացող ճտեր սերելու համար հիմնական նախապայմաններից մեկն է խոշոր կոլխոզ և նրա արտադրական սպեցիալիզացիա:

ՍՈՎԽՈԶՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սովխոզները (խորհրդային տնտեսությունները) հանդիսանում են շատ ուժեղ զենք շրջապատի գյուղացիական ցիրուցան և մանր տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման գործում: միաժամանակ սովխոզները հանդիսանում են արտադրական բազա խորհրդային իշխանության հումուլիթային, ասլրանքային և սննդամթերքների ռեսուրսների ավելացման շարժում:

Այստեղից էլ պարզ է, վոր գոյություն ու-

նեցող սովխոզների հետագա ղարգացումը, ինչպես նաև նորերի հիմնումը և նրանց իրապես վերածելը խոշոր, մեքենայացված գյուղատնտեսական սոցիալիստական տիպի գործարանների, հանդիսանում և ալսոր խոշորագույն կարևորություն ունեցող մի գործ:

Հաշվի առնելով այն հսկայական աշխատանքները, վոր կատարել և թեկուղ միայն Հյուսիսային Կովկասի «Գիգանտ» սովխոզը, տեսնում ենք, վոր սովխոզը Հափազանց ազդու զենք և հարևան աշխատավորական տնտեսությունները կոլլեկտիվացման լենթարկելու գործում:

Համկհնտկոմն իր համապատասխան վորոշման մեջ նշելով սովխոզների առջև առաջիկա գարնանը դրված կարևորագույն խնդիրները՝ տնտեսաստվարության վերացում, արտադրողականության բարձրացում, ինքնարժեքի իջեցում, սոցմրցում և այլն՝ շեշտում և նաև վորպես հիմնական խնդիր սովխոզների ազդեցությունը շրջակա գյուղերի սոցիալ-տեխնիկական վերակառուցման գործում: Սովխոզները պարտավոր են և պետք և արտադրական-կազմակերպչական և լայն մասսայական աշխատանք տանեն շրջապատի գյուղացիության մեջ: Դա պիտի նպատակ դնի շրջապատի չքավոր-միջակ գյուղացիությունը կազմակերպել կոլխոզների մեջ:

1929 թվին Անդրկովկասում լեզել և 85

սովխոզ 7 հազար 3 հարյուր հեկտար հողով և 570 հազար ռուբլի արժեցող ընդհանուր արտադրանքով: Մինչդեռ 1928 թվին նույն քանակով սովխոզներն ունեցել են 5 հազար 9 հարյուր հեկտար ցանք 480 հազար ռուբլի արժեքի ընդհանուր արտադրանքով:

Կոնտրոլ թվերով 1930 թվի համար նախատեսված ե սովխոզինարարութւան հսկայական ծրագիր, վորի համաձայն հիմնվելու յե 20 նոր խոշոր սովխոզ 12 միլիոն ռուբլու ներդրումով:

Քանի վոր սովխոզները միաժամանակ հումուլթալին և սննդամթերքների բազա յեն, դիրեկտիվ որգանների վորոշումը կա հատուկ ուշադրություն դարձնել նաև խոշոր արդյունաբերական քաղաքներին կից կազմակերպել սովխոզներ, վորոնց տնտեսությունը կլինի այգեգործական, բանջարաբուծական, թռչնաբուծական կամ կաթնատնտեսական և շնորհիվ դրա լայն հնարավորություն կստեղծվի սննդամթերքներով, եժան կերպով բավարարել քաղաքի պրոլետարիատին ու հիմնովին կանոնավորել սննդամթերքների մատակարարման աշխատանքը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ՆՇԱ- ՆԱԲԱՆՈՎ

Առաջիկա գարնանացանի որիննաիր պլանի համաձայն նախատեսվում է Անդրկովկասում գարնանացանի ընդարձակում 1929 թվի նկատմամբ 13,5 տոկոս կամ 150 հազար հեկտարով: Հացահատիկների ցանքերի տարածությունը դրա հաշվին աճելու յե միայն 28 հազար հեկտարով. մնացածը գնում է տեխնիկական բույսերին և խոտացանությանը:

Սակայն հարց է առաջ գալիս. ի՞նչ կերպ և ի՞նչի հաշվին 150 հազար հեկտարով ընդարձակել ցանքատարածությունը: Զպիտի մոռանալ, վոր մեր գյուղացիական տնտեսությունների տեխնիկական հետամնացության, հողոգտագործման հին ու սխալ ձևերի և այլ պատճառներով շարունակահազին քանակությամբ հողեր մնում են անմշակ: Խոպան հողերի, հարոսների և վոչ ռացիոնալ ոգտագործվող հողերի հաշվին է, վոր մեծ մասամբ ցանքատարածությունը պիտի ընդարձակել: Գարնանացանի ցանքսաշրջանառության 150 հազար հեկտարով ընդարձակումից 115 հազարը կատարվում է իհաշիվ խամերի, պառկած հողերի և հարոսների մշակման: Այս հանգամանքը տեղերը լավ պիտի հաշվի առնեն:

Յուրաքանչյուր գյուղխորհուրդ կարող է և պարտավոր է հաշվի առնել խամ հողերը, վորոնք կարող են մշակվել և արդյունավետ կերպով ոգտագործվել: Հասկապես կուխոգները լայն հնարավորություն ունեն իրենց մեքենաներով և տրակտորներով մշակելու խամ հողերը: Մյուս կողմից ցանքսաշրջանառություն մացնելով հնարավոր է ազատվել հարոսներից և հսկայական չափով ընդարձակել ցանքսատարածությունը, ինչպես նաև տնտեսության յեկամուտը բարձրացնել:

Մյուս կողմից ջրաշինարարության, վոռոգման ցանցի կանոնավորման և նոր ջրանցքների կառուցման շնորհիվ ևս անոգտագործելի ընկած շատ հողեր սկսում են ոգտագործվել: Կամ անյեկամուտներ կուխոռանների համար ոգտագործվող հողերը սկսում են մշակվել բարձր տեխնիկական կուխոռանների համար:

Ցանքսատարածության ընդարձակման հետ կապված է սերմացվի խնդիրը: Անհրաժեշտ է բոլոր կուխոգներին և գյուղխորհուրդներին կից ստեղծել հենց այժմյանից սերմֆոնդեր: Դրանով կապահովենք լրիվ ցանքը և կկարողանանք կազմակերպել սերմերի դառման և ախտահանման գործը: Սերմֆոնդերի կազմակերպումը հարվածալին և անհետաձգելի խնդիրներից է. դրանց կազմակերպմանն անմիջապես պիտի անցնել:

Ծանօթատարածության ընդարձակումն ըստ
կուլտուրաների տեսակների լինելու յե այս կերպ.
կուլտուրաներ 1929 թ. 1930 թ. աճը $\frac{0}{10}$ -ով

Հացահատիկներ	881,8 հ. հեկ.	910,1 հ. հեկ.	3,24
Տեխնիկական	165,0 »	245,6 »	48,8
Ձ ա յ	7,8 »	14,3 »	83,5
Ցանովի խոտ	16,6 »	32,0 »	93,0
Ա յ Լ	61,2 »	81,0 »	32,4

Գյուղատնտեսության հասարակայնացված
սեկտորում ցանօթատարածությունն ըստ այդ
խոշոր թվերի 40 հազար 9 հարյուր հեկտարից
հասնում է 147 հազար 8 հարյուր հեկտարի կամ
տալիս է աճ 177 տոկոս: Միայն կոլխոզների
ցանքերն աճում են մոտ 4 անգամ:

ՄԵՔԵՆԱՆՆՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ծանօթատարածության ընդարձակման հետ
միասին ԽՍՀՄ Ժողկոմխորհի դեկրետով հրա-
հանգվում է բարձրացնել նաև բերքատվությունը
և մեքենայացման յենթարկել գյուղատնտե-
սությունը: Առհասարակ մեքենաները բարձրաց-
նում են արտադրողականությունը, դրա հետ
միասին նաև բերքատվությունը:

Այս տարի կազմակերպվելու չի բազմաթիվ
վայրերում մեքենատրակտորային կայաններ և
արհեստանոցներ: Նման մեքենատրակտորային
կայան 88 տրակտորից կազմակերպվում է մեզ
մոտ Սարգարաբադում:

Այս տարի Հայաստան ե ներմուծվելու 115 նոր տրակտոր, 6850 գուլթան, 500 նոր բամբակացան մեքենա շարքացան մեքենաների թիվը հասցվելու յե 669-ի և տրիլերների թիվը՝ 568-ի:

Իհարկե յեղած մեքենաների քանակն անբավարար ե: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ներկա տեմպի շրջանում ավելի ևս զգացվելու յե մեքենաների կարիքը: Հինց այդ հանդամանքը հրամայական ե դարձնում բանուկ անասունների խելացի ոգտագործումը: Ձիերի, յեզների, գոմեշների և այլ բանուկ անասունների լրիվ հաշվառումը, նրանց նպատակահարմար ոգտագործումը և հատկապես խնամքը, հնարավորություն կտա խոշոր չափով լրացնելու մեքենաների սլակասը: Պետք ե կազմակերպել ձիա-մեքենայական և յեղա-մեքենայական կալոննաներ և ոգտագործել դրանք դարնանացանի կամպանիային:

Պետք ե հոգալ նաև կերի մասին. հատկապես կոխոզները պիտի պատրաստեն բանոզ անասունների կերի ֆոնդեր:

Այդ կալոննաների կազմակերպումն ունի այսոր չափազանց կենսական նշանակություն: Դրա պատճառով ե, վոր կուլակութունը կոխոզների դեմ պայքարելու զենքերից մեկն ել այն ե դարձրել, վոր միամիտներին, խավարա-

միտներին համողում ե կոլխոզ մտնելուց առաջ
ունեցած բանող անասունները ծախեն: Դրա-
նով կուլակուլթյունն աշխատում ե կոլխոզների
ուժը թուլացնել նրանց զրկելով բանող անա-
սուններից: Պետք ե խիստ պայքար մղել հետա-
մնաց տարրերի մեջ նկատվող անասունները վա-
ճառելու խայտառակ յերևույթի դեմ: Բանող
անասունների սլահպանումը, խնամքը և կալոն-
նաներով նպատակահարմար ոգտագործումը կլի-
նի գարնանացանը հավելումով ոգտագործելու
նախապայմաններից մեկը: Գյուղատնտեսական
մեքենաների ներմուծման ծրագիրն այս տարվա
համար այդ դեպքում բավարար ե:

Սակայն չպիտի մոռանալ մի կարևոր հան-
գամանք. գյուղատնտեսական մեքենաների բա-
ցարձակ քանակը չե միայն կարևորը, ալլ նաև
նրանց լրիվ ոգտագործումը: Շատ անգամ մեր
կոլխոզներն ու սովխոզները, գյուղփոկերն ու
վարձակայանները չեն կարողանում խելացի կեր-
պով կազմակերպել գյուղատնտեսական մեքենա-
ների և գործիքների շահագործումը, վորի պատ-
ճառով նրանց արտադրողականությունը շատ
ցածր ե: Հաճախ մեր տրիերները ձմեռվա ըոլոր
ամիսներին անգործ ընկած են լինում ձյունի
կամ լավագույն դեպքում մի տանիքի տակ,
իսկ գարնանն ել զգացվում ե նրանց ուռը կա-

րիբը, քանի վոր սերմերը պիտի գտել: Տրակ-
տորների նազըռուզկան լրիվ չի լինում և շատ ո-
րեր նրանք անդործ են մնում: Կամ լինում է
տրակտոր, վոր մի ամսում վարում է 29 - 30
հեկտար, իսկ մյուս ամսում վարում է 8—10
հեկտար: Վերջ կոլխոզներ փոխանակ լրիվ նա-
զըռուզկայով մի տրակտոր բանեցնելու, իսկ մյուսն
այլ աշխատանքում ոգտադործելու, 2-ը կամ 3-ն
յեն բանեցնում կես կամ մի յերրորդ նազըռուզ-
կայով:

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Գալատները, ինչպես նաև շրջաններն ու
գյուղերը զարնանացանի իրենց ծրագիրը կազ-
մելիս պարտավոր են լրիվ կերպով հաշվի առ-
նել յեղած բոլոր մեքենաները և մշակել ման-
րամասն որացուցային ծրագիր նրանց լրիվ ոգ-
տադործման համար: Գարնանացանի կոնտրոլ
թվերի իրագործումը պահանջում է մեղանից
նաև գյուղգործիքների ու մեքենաների ամենա-
ուսցիոնալ և տնտեսավարական ոգտադործումը:

Թեկուզ միայն սերմերի գտումը պահան-
ջում է, վոր ամբողջ ձմեռը սերմադոտիչներն աշ-
խատեն: Գյուղացիութունն իր ունեցած ամբողջ
հացահատիկը պետք է տնց կաջնի սերմադոտիչով
այժմյանից և ընտրովի սերմացու ունենա ցա-

ներու համար: Միաժամանակ այժմյանից պետք է կարգի բերել գյուղատնտեսական մեքենաները, վոր նրանք կազմ ու պատրաստ լինեն անմիջապես վարի և ցանքի աշխատանքներին անցնելու համար: Միաժամանակ պիտի նկատի ունենալ արհեստագործները, վոր տրակտորների պակասութիւնը ստիպում է խելացի եգտագործում բանող անասուններին: Անհրաժեշտ է կազմակերպել ձիա-մեքենայական և լեղա-մեքենայական կալոններ: Ծրագրել դրանց արդյունավետ եգտագործումը և պայքարել բանող անասունները փշացնելու դեմ:

Գարնանացանի բոլոր աշխատանքների լրիվ ու բազմակողմանի ծրագրումն ինքնին բավական դյուրացնի աշխատանքը:

ՄԻԱՑՅԱԼ ՖԲՈՆՏՈՎ

Սակայն չպիտի մոռանալ, վոր հակախորհրդալին, կուլակային, դաշնակցական տարրերը ջանք չեն խնայելու և ամեն միջոցի պիտի դիմեն խանդարելու համար գարնանացանի կոնտրոլ թվերի լրիվ իրագործմանը: Քանի վոր դարնանացանը հիմք է դնելու Անդրկովկասի, հետվարար և Հայաստանի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման թափի ու ժողացմանը, պարզ է, վոր կապիտալիստական տարրերը պետք է ամեն միջոց ձեռք տռնեն դա խանդարելու:

կուլակային, դաշնակցական տարրերը պետք է դանազան պրովակացիաներով, ինչպես նաև ակտիվ գործողություններով չքավոր, միջակ, բատրակ և կոլխոզնիկ ակտիվիստների կամ ներանց տնտեսությունների դեմ, աշխատեն տապալել գաղնաանացանի կամպանիան: Ել ավելի լի սրվելու դասակարգային պայքարը գյուղում, քանի վոր գյուղատնտեսության համայնացված սեկտորի ողակն ավելի պինդ է սեղմում կուլակի կոկորդը. Նա որհասական պայքար է մղում:

Ներկա գաղնաանացանը հանդիսանում է խիստ բեկման տարի: Այսօր արդեն կոլխոզնարժման ներկա արագացրած տեմպով խնդիր է դրվում, վորպես անմիջական դիրեկտիվ փոշնչացնելու կուլակությունը վորպես դասակարգ: Կոլխոզների և խորհրդային տնտեսությունների խոշորացումն ու ծավալումը հանդիսանում է կապիտալիզմի գերեզմանափորը: Դրա համար ել այսօր կուլակությունը բոլոր տեսակի միջոցներին դիմում է կոլխոզնարժման թափը թուլացնելու, գաղնաանացանի կամպանիան վիժեցնելու համար:

Սակայն գյուղի չքավորն ու միջակը, քաղաքի պրոլետարիատի և նրա առաջնորդ կոմկուսակցության ղեկավարությամբ կշախշախեն հակախորհրդային բոլոր տարրերի փորձերը դանդաղելու գաղնաանացանի կամպանիան: Զբաղոր

և միջակի դաշինքի ամրապնդմամբ և պրոլետարիատի ղեկավարութեամբ ուժեղ և վճռական հաղթանակ կտանենք գարնանացանի կամպանիայի ընթացքում:

Այդ պայքարի ընթացքում չպիտի մոռանալ արժանի և հատու հարվածը տալ նաև տրոցկիսական թափթփուկներին և աջ ուղադրայունիստներին: Դասակարգային պայքարի սրումը, մեր գործնական ու վճռական քայլերը կուլակութունը վորպես դասակարգ վոչնչացնելու, ինքնին պահանջում են մեզնից ավելի աչալուրջ ու ուշադիր վերաբերմունք, պահանջում են ավելի խիստ ու կտրուկ միջոցներ հակալենինյան և հակախորհրդային բոլոր արտահայտութունների դեմ:

Այսօր արդեն անհրաժեշտ է առաջադրել համատարած կոլեկտիվացման շրջաններից կուլակներին բոլորովին վտարելու, նրանց հողերն ու բնակարանները համայնացնելու և կոլխոզներին տրամադրելու խնդիրը: Հատկապես բատրակների ներգրավումը կոլխոզները հրամայական կերպով առաջ է քաշում բնակարանային հարցը: Կուլակներին դուրս քշելով գյուղերից ու շրջաններից՝ նրանց տները պիտի տրամադրել բատրակներին, իսկ գոմերը և պահեստները՝ կոլխոզների անասուններին և ունեցվածքին:

Մյուս կողմից հասարակական խիստ պար-

սավանքի պիտի յենթարկել բոլոր այն աշխատավոր գյուղացիներին, ովքեր կուլակներին լըսելով՝ ծախում են իրենց անասունները: Այսոր կուլակութունը փորձում է բանող անասուններից զրկել կուլտոզները: Ով իր անասունը ծախում է, նա կուլակի կամքն է կատարում: Անհրաժեշտ է ամենախիստ պայքար նման անասնավաճառ անհատների դեմ:

Քաղաքի պրուեստարիատն արդեն ծավալել է չափազանց ուժեղ աշխատանք իր ղեկավարութունը գյուղի նկատմամբ ուժեղացնելու գործում: Արդեն բազմաթիվ պատասխանատու ընկերներ մեկնել են գյուղերը վորոշ ժամանակով կազմակերպելու և ղեկավարելու համար գարնանացանի կամայանիայի աշխատանքները: Բացի դրանից ուղարկվում են գյուղերը և կալիոպները հաճուկ բանվորական բրիգադներ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման աշխատանքներում ակտիվ մասնակցելու համար:

ԽՍՀՄ պրուեստարիատը հակակրոնական կամայանիայի առթիվ կազմակերպեց ինդուստրացման 2-րդ օր՝ վորոշելով տրակտորներ, մեքենաներ ու բրիգադաներ ուղարկել գյուղ:

Բացի այդ ամենից զործարաններում բանվորները կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ լավագույն և առաջավոր բան-

վորներ են ընտրուած գյուղաշխատանքի ուղարկելու համար: Ամեն մի բանվոր գնում է ամենապակասը մի տարի ժամանակով ղեկավորելու համար սոցիալիստական վերակառուցման գործը գյուղում: Ուշագրավ է այն հանգամանքը, վոր բանվորական ընդհանուր ժողովներում դեմ են դուրս գալիս բանվորները այն մարդկանց թեկնածություններին, ովքեր լավ տկտիվ չեն: Ատվող են տալիս բոլոր նրանց, ովքեր չեն վաչելում ամբողջ բանվորության վստահությունը:

Գյուղ մեկնող բանվորների առաջին խըմբերն արդեն հասել են գյուղ: Նրանք սլոգիտարական նոր թափ ու յեռանդ կմտցնեն գյուղ:

Նրանք կկազմակերպեն և արդեն կազմակերպել են շատ տեղերում գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններ: Նրանք մոբիլիզացիայի չեն յենթարկում խորհրդային ամբողջ հասարակայնությունը համատարած կոլեկտիվացման և գալնանացանի շուրջը:

Նրանք սկսում են գործարանների փորձի հիման վրա ծավալել ու կազմակերպել սոցիալիստական մրցության գործը գյուղում, նրանք արդյունաբերության զարգացման խելացնոր արագության թափը մտցնում են գյուղատնտեսության մեջ: Պրոլետարիատն այսոր արդյունաբերության մի շարք ճյուղերում ամերիկյան տեմ-


պը հետ ե թողել, վորպէս թույլ ու անբաժարարեւ
ստեղծել ե խորհրդային, պրոլետարիատի գիկ-
սատուրայի տեմպ: Ահա այդ նոր, խորհրդային
տեմպն ե, վոր անցնում ե նաև գյուղ:

Սկսված այդ հսկա շարժումը ցույց ե տա-
լիս, վոր գյուղատնտեսության սոցիալիստական
վերակառուցման հնգամյակը իսկապէս 2 տա-
րում կիրականացնենք:

Աշխատանքները հաջող ընթանում են, սա-
կան չպիտի մոռանանք, վոր մեզ մոտ տնտեսու-
թյան դարգացման տեմպը կատաղի լե: Մենք
պետք ե գարնանացանի մեր աշխատանքներում
այնպիսի հարվածայնություն ստեղծենք, վոր
այդ տեմպից հետ չմնանք:

Առաջին ու հիմնական աշխատանքն ե այդ
տեսակետից գարնանացանի կոնտրոլ թվերը գյու-
ղական լացն աշխատավորությանը հասցնելը և
խորհրդային հասարակայնությանը մոբիլիզացիա-
լի լենթարկելը գարնանացանի կիրառման շուրջը:

Միացյալ ճակատով ընդդեմ կուլակային-
դաշնակցական տարրերի՝ համատարած կոլխո-
դացման համար:



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039162

(074)

ԳԻՆԸ 5 ԿՈՊԵԿ. (1 մամուլ)

A $\frac{I}{4267}$



Կ. Կապույան

На фронте сплошной коллективизации

Госиздат ССР Армении
Эривань - 1930